ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **26.05.2022թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Սարգսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Հ. Ավագյան	- Տեսչական մարմնի ղեկավար
Գ. Հովհաննիսյան	- Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ

Չեն մասնակցել՝

Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Հովհաննիսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Օրակարգի հարցեր.

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագծի քննարկում և հաստատում:

2. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում:

3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում:

4. Այլ հարցեր:

Օրակարգը հաստատվեց առանց փոփոխությունների

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագծի քննարկում և հաստատում

Հ. Պողոսյանը ներկայացրեց Խորհրդի աշխատակարգում փոփոխություններ կատարելու առաջարկությունները: Նշեց, որ.

1) Նախատեսվում է որակի ապահովման ստորաբաժանմանը վերապահել խորհրդի նիստերին և էլեկտրոնային քվեարկություններին խորհրդակցական ձայնի իրավունքով հանդես գալը:

2) Նախատեսվում է էլեկտրոնային քվեարկության անցկացնել այն դեպքում, երբ Խորհրդի նիստի ժամանակ անհրաժեշտություն է առաջանում օրակարգում ընդգրկված հարցերը լրամշակել կամ դրան առնչվող այլ աշխատանքներ կատարել՝ նիստի օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Քվեարկության ժամկետ սահմանվում է 3 աշխատանքային օր՝ 2-ի փոխարեն: Սահմանափակվում են Խորհրդի նախագահի կողմից էլեկտրոնային քվեարկություն ներկայացնելու իրավունքը՝ տարին մեկ անգամ՝ քվեարկությանը ընդգրկելով մեկ հարց:

3) Նախատեսվում է նիստերի իրավազորությունը կարգավորող նոր դրույթներ: Բացի նիստին անդամների 2/3-ից ավելիի մասնակցությունը, նաև սահմանվում է նիստերին անդամների կեսից ավելիի մասնակցության ապահովումը՝ այն պայմանով, որ նիստին մասնակցում է հասարակական կազմակերպության առնվազն մեկ ներկայացուցիչ: Այդ դեպքում քվեարկությունը տեղի է ունենում նիստին հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հեռակա ձևով:

Նիստն իրավազոր է նաև եթե նիստին ներկա է 6 անդամ, իսկ բացակայող անդամներից առնվազն մեկը մեկ օր առաջ ներկայացրել է առաջարկություն և տվյալ նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իր քվեարկությունը:

Նիստին անդամի մասնակցությունը ընդհատվելու դեպքում՝ անդամին վերապահվում է օրակարգի հարցերի վերաբերյալ իր քվեարկության ձայնը արտահայտելու իրավունք:

Ա. Ասոյանը նշեց, որ փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված լիազորություն կամ առնվազն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշմամբ հաստատված տեսչական մարմինների կառավարման խորհուրդների աշխատակարգի օրինակելի ձևում համապատասխան նորմերի ամրագրում: Հեռավար քվեարկությունը տարին մեկ անգամ Խորհրդի նախագահի առաջարկով անցկացնելու առաջարկի վերաբերյալ նշեց, որ նման փոփոխությունը նպատակահարմար չէ հաշվի առնելով, որ օրենքով հստակ սահմանված են, թե ինչ կարգով և որ դեպքում է իրականացվում հեռակա քվեարկությունը: Հեռակա քվեարկությունների նման սահմանափակում սահմանելու համար անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ օրենքում կամ

օրինակելի աշխատակարգում: Խորհրդի անդամի կողմից նիստին չմասնակցելու դեպքում քվեարկության ձայնը նախապես ներկայացնելու վերաբերյալ նշեց, որ այդ փոփոխությունը նախատեսելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն նախատեսել օրենքով՝ սահմանելով լիազորություններ, կամ առնվազն տեսչական մարմինների կառավարման խորհուրդների աշխատակարգի օրինակելի ձևում նախատեսել համապատասխան փոփոխություն: Մյուս առաջարկների վերաբերյալ նշեց, որ առկա են համանման դիտարկումներ և հավելեց, որ նման փոփոխություններ կատարելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված լիազորությունների առկայությունը:

Ռ. Սարգսյանը նշեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նույնպես ներկայացվել են համանման դիտարկումներ և առաջարկություններ:

Ա. Ասոյանը նշեց, որ այլ տեսչական մարմինների կառավարման խորհուրդներում առկա են մի շարք դիտարկումներ աշխատակարգի վերաբերյալ, և եթե Հ. Պողոսյանը պնդում է ներկայացված առաջարկությունները՝ օրենքում և ընդհանուր աշխատակարգում փոփոխություններ կատարելու համար, ապա հարցը կարող է բարձրաձայնվել ընդհանուր մոտեցումներ սահմանելու նպատակով:

Խորհրդի անդամների միաձայն (7 դեմ) քվեարկությամբ որոշվեց ներկայացված նախագիծը վերադարձնել լրամշակման՝ սահմանել միայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշմամբ սահմանված լիազորող նորմերի շրջանակներում կարգավորումները և լրամշակված նախագիծը ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներին կարծիքի:

2. Քննարկվեցին օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը՝

- ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

- ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում

Թ. Հակոբյանը նշեց, որ Խորհրդին ներկայացվող յուրաքանչյուր հաշվետվությամբ ընթացիկ յուրաքանչյուր միջոցառման վերաբերյալ ներկայացվել է, թե տրված հանձնարարություններից որոնք են կատարվել և որոնք՝ ոչ: Նշեց, որ նախորդ նիստին տրվել է հանձնարարական, եթե Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը ազատվում է զբաղեցրած պաշտոնից, ապա հաջորդ նիստում Տեսչական մարմնի ղեկավարը պետք է ներկայացնի ազատման պատճառները: Այս կապակցությամբ տեղեկացվեց, որ տեղակալի ազատում չի եղել:

Թ. Հակոբյանը ներկայացրեց Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը: Տեղեկացրեց, որ Տեսչական մարմնում ծառայողական քննություն վարողների հետ քննարկում է տեղի ունեցել և վերջիններս հրահագավորվել են ծառայողական քննությունները ավելի արդյունավետ իրականացնելու հարցերի վերաբերյալ: Նշեց, որ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից հանձնարարական է տրվել՝ յուրաքանչյուր եռամսյակի համար Տեսչական մարմնի դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ վերլուծություն իրականացնելու և ներկայացնելու նպատակով՝ բարձրացված խնդիրները կարգավորելու համար: Նշեց, որ քննարկվել են 2021 թվականի և 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում կայացված բոլոր դատական վճիռները և դրանց պատճառները, որոնց շրջանակներում տրվել են հանձնարարականներ:

Ներկայացրեց «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում Տեսչական մարմնում առկա խնդիրները:

Հ. Պողոսյանը նշեց, որ նախորդ նիստերին որոշվել էր քննարկման առարկա դարձնել Տեսչական մարմնին պահուստային ֆոնդ ստեղծելու վերաբերյալ հարցը և առաջարկեց այդ հարցը քննարկել:

Ն. Մկրտչյանը նշեց, որ Ֆինանսների նախարարությունում առկա են մի շարք սկզբունքներ, որոնք տարածվում են բոլոր գերատեսչությունների և պետական մարմինների բյուջետային գործընթացը կարգավորելու վրա: Ֆինանսավորումը պետք է բխի կառավարության ծրագրից, ռազմավարությունից բխող հստակ նշված գործողություններից և այլն: Այդ սկզբունքներից ելնելով իրատեսական չի լինի հայցել համապատասխան պահուստային ֆոնդ ստեղծելու գործընթացը: Յուրաքանչյուր դեպքում առանց պահուստային ֆոնդ ունենալու, եթե հրատապ անհրաժեշտություն

առաջանա որոշ դրամային միջոցներ հայցելու համար, ապա այդ գործընթացը հրատապ կարգով կազմակերպելը հնարավոր է:

Հ. Ավագյանը նշեց, որ այդ հարցը աշխատանքային կարգով ևս մեկ անգամ կքննարկվի Խորհրդի անդամ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Հովհաննիսյանի հետ: Որակի ապահովման վարչության հաշվետվության վերաբերյալ նշեց, որ այս պահին Տեսչական մարմնում առկա են 200-ից ավել դատական գործեր, որոնց վերաբերյալ ներկայացվել է համապատասխան հաշվետվություն և իրականցվել են վերլուծություններ:

Մյուս բարձրացված կարևոր հարցի վերաբերյալ նշեց, որ 2021 թվականին տարեկան բուջեով հայցվել էր մոտ 100 մլն դրամ՝ Տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի շենքի հարցը լուծելու և գլխամասը նոր շենք տեղափոխելու նպատակով, սակայն հայցը մերժվեց այն պայմանով, որ այդ գործընթացը կիրականացվի պահուստում առկա միջոցներից հատկացնելու հնարավարության առկայությամբ՝ համապատասխան նախագծեր ներկայացնելու դեպքում: Այժմ նորոգման և տեղափոխման գործընթացը ավարտելու նպատակով հայտ է ներկայացվել որպեսզի տրամադրվեն համապատասխան միջոցներ:

Հ. Ավագյանը միաժամանակ տեղեկացրեց, որ կառավարության որոշմամբ կրճատվել է Տեսչական մարմնի ղեկավարի օգնականների հաստիքների թիվը և անհրաժեշտություն է առաջացել Տեսչական մարմնի հաստիքացուցակում կատարել համապատասխան փոփոխություն և առաջարկեց հարցը քննարկել:

Ա. Ասոյանն առաջարկեց հարցը հետագայում ուսումնասիրել և իրականացնել էլեկտրոնային քվեարկություն:

Թ. Հակոբյանը ներկայացրեց տեղեկատվություն Տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքների մասին, մասնավորապես Տեսչական մարմնի 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների կատարողականների և բացթողումների, ստուգայցերի, պլանավորված ստուգումների իրականացման և ստուգումների չիրականացման պատճառների վերաբերյալ, պլանային և ըստ անհրաժեշտության ստուգումների հարաբերակցությունը, վերստուգումների հետ կապված խնդիրները և վերստուգումների արդյունքները, հիմնական նպատակին հասնելու մակարդակը, Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների և դրանց ընթացքի վերաբերյալ:

Խորհրդի անդամների միաձայն (7 կողմ) քվեարկությամբ որոշվեց.

- ընդունել ի գիտություն՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը.

- հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը.

- Հ. Ավագյանին՝ ուսումնասիրել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությամբ արձանագրված խնդիրները և ապահովել արձանագրված խնդիրների բացառման գործընթացը:

Որոշվեց.

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծը վերադարձնել լրամշակման՝ սահմանել միայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշմամբ սահմանված լիազորող նորմերի շրջանակներին համապատասխանող կարգավորումները և լրամշակված նախագիծը ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներին կարծիքի:

2. Ա. Ասոյանին՝ Հ. Պողոսյանի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա քննարկել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության հարցը և նման անհրաժեշտությունը հիմնավոր համարվելու դեպքում ապահովել հետագա ընթացքը:

3. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

5. Հ. Ավագյանին՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությամբ արձանագրված խնդիրները և ապահովել արձանագրված խնդիրների բացառման գործընթացը:

6. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու հարցը հավանություն արժանացնելու նպատակով անցկացնել էլեկտրոնային քվեարկություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**